ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2024

ԴԱՇՆԱՄՈՒՐ

ԹԵՍՏ 4

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ	
ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ	

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 Բարձրությունը հնչյունի հատկություններից մեկն է և կախված է

1) տատանումների հաճախականությունից
2) տատանումների տևողությունից
3) տատանումների ուժգնությունից
4) տատանումների թափից

2 Երաժշտական համակարգի հնչյուններն ըստ բարձրության հաջորդականորեն դասավորված՝ կոչվում են

1) հնչյունաշար
2) լադ
3) տոնայնություն
4) գամմա

3 Մեծ սեքստան կազմված է

1) 7 աստիճանից և 6 տոնից
2) 6 աստիճանից և 4.5 տոնից
3) 7 աստիճանից և 5.5 տոնից
4) 6 աստիճանից և 5 տոնից

4 Մեծացրած կվարտսեքստակորդի կառուցվածքն է.

1) մծց.4 + փ.3
2) մք.4 + մ.3
3) փքց.4 + մ.3
4) մ.3 + մծց.3

5 Կվարտսեքստակորդը եռահնչյան

1) առաջին շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի տերցիային տոնը
2) երկրորդ շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի կվինտային տոնը
3) երկրորդ շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի տերցիային տոնը
4) առաջին շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի կվինտային տոնը

6 D_2 - ը կառուցվում է

1) 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + մ.3 + փ.3
2) 2-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + փ.3 + փ.3
3) 2-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + մ.3 + փ.3
4) 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + փ.3 + փ.3

7 VII_3^4- ը մինորում ունի հետևյալ կառուցվածքը.

1) փ.3 + մծց.2 + փ.3
2) մծց.2 + փ.3 + փ.3
3) մ.2 + փ.3 + փքց.2
4) փ.3 + մ.2 + փ.3

8 II_5^6-ը հարմոնիկ մաժորում

1) կառուցվում է 6-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + փ.3 + մ.2
2) կառուցվում է 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + փ.3 + մ.2
3) կառուցվում է 6-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + փ.3 +մ.3
4) կառուցվում է 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + մ.3 + մ.2

9 Լադի բոլոր հնչյունների հաջորդաբար հնչողությունը կոչվում է

1) գամմա
2) արպեջիո
3) տոնայնություն
4) հնչյունաշար

10 Համանուն տոնայնություններն ունեն

1) տարբեր հնչյունաշար, տարբեր կառուցվածքներ, միևնույն տոնիկաներ
2) միևնույն հնչյունաշար, միևնույն կառուցվածքներ, տարբեր տոնիկաներ
3) տարբեր հնչյունաշար, միևնույն կառուցվածքներ, տարբեր տոնիկաներ
4) միևնույն հնչյունաշար, տարբեր կառուցվածքներ, միևնույն տոնիկաներ

11 Ո՞ր շարքում են միայն Միջնադարյան լադեր

1) Լիդիական, Միքսոլիդիական, Լոկրիական, Էոլական
2) Էոլական, Պենտատոնիկա, Լիդիական, Լոկրիական
3) Միքսոլիդիական, Կրկնակի մեծացրած, Փռյուգիական, Հարմոնիկ
4) Իոնական, Անհեմիտոն, Դորիական, Լիդիական

12 Տևողությունների բաժանման առանձնահատուկ ձևերն են.

1) սինկոպան, տրիոլը, կվարտոլը
2) դուոլը, տրեմոլոն, սեպտոլը
3) սեպտոլը, սեքստոլը, տրիոլը
4) սեքստոլը, կվինտոլը, տրելը

13 Բարդ և խառը չափերը տարբերվում են միմյանցից հետևյալ առանձնահատկություններով.

1) բարդ չափերը բաղկացած են տարբեր պարզ տակտերից, խառը չափերը բաղկացած են միևնույն տակտերից
2) բարդ չափերը բաղկացած են միևնույն պարզ տակտերից, խառը չափերը բաղկացած են տարբեր պարզ տակտերից
3) բարդ չափերը բաղկացած են միևնույն տակտերից, խառը չափերը բաղկացած են միևնույն տակտերից
4) բարդ չափերը բաղկացած են միևնույն պարզ տակտերից, խառը չափերը բաղկացած են միևնույն կամ տարբեր պարզ տակտերից

14 Հետևյալ տերմինները՝ **Commodo, Prestissimo**, **Agitato**, **Amabile**, **Doloroso** նշանակում են (ըստ հերթականության)

1) հանգիստ, ծայրահեղ արագ, հուզված, շարժուն, թախիծով
2) հարմարավետ, գրգռված, հանգիստ, թախծալի, տխուր
3) թախծալի, արագ, զգացմունքով, կրակոտ, կրքոտ
4) հարմարավետ, ծայրահեղ արագ, հուզված, հաճելի, թախծալի

15 Տոնայնությունների դասակարգման մեջ երկրորդ կարգի ազգակցության հիմքում ընկած է

1) S և D եռահնչյունների ընդհանրությունը
2) հարմոնիկ D եռահնչյունների ընդհանրությունը
3) հարմոնիկ S և D եռահնչյունների ընդհանրությունը
4) T եռահնչյունների ընդհանրությունը

16 Պոլիֆոնիկ շարադրանքում նմանակումը կոչվում է

1) կանոն
2) ֆուգա
3) իմիտացիա
4) կոնտրապունկտ

17 Ռոնդո- սոնատը այն ձևն է, որն ունի հետևյալ տառային սխեման

1) ABCAB
2) ABACAB^{1}A
3) ABCBA
4) ABACADA

18 Ո՞վ է հայկական առաջին գործիքային կոնցերտի հեղինակը.

1) Ալեքսանդր Հարությունյան
2) Արամ Խաչատրյան
3) Առնո Բաբաջանյան
4) Գրիգոր Եղիազարյան

19 Ո՞ր կոմպոզիտորի արվեստում է ձևավորվել ծրագրային «սիմֆոնիկ պոեմի» ժանրը.

1) Ֆերենց Լիստ
2) Ֆրանց Շուբերտ
3) Ֆելիքս Մենդելսոն
4) Յոհաննես Բրամս

20 Դաշնամուրային ո՞ր ժանրին չի անդրադարձել Սերգեյ Ռախմանինովը.

1) էտյուդ
2) սոնատ
3) նոկտյուրն
4) պրելյուդ

21 Նշվածներից ո՞ր կոմպոզիտորն է հեղինակել Գոսերով սիմֆոնիան.

1) Ղազարոս Սարյան
2) Տիգրան Մանսուրյան
3) Էդվարդ Միրզոյան
4) Անուշավան Տեր-Ղևոնդյան

22 Կլաուդիո Աբադո, Եվգենի Մրավինսկի, Անտոն Գակկել, Դավիթ Խանջյան՝ հանրաճանաչ

1) դիրիժորներ են
2) ջութակահարներ են
3) դաշնակահարներ են
4) կոմպոզիտորներ են

23 Ի՞նչ է նշանակում «կլավեսին» բառի արմատը.

1) ստեղն
2) հնչյուն
3) գործիք
4) բանալի

24 Վ.Ա. Մոցարտի «թուրքական ոճով» ռոնդոն նշվածներից ո՞ր ստեղծագործության ֆինալն է.

1) թիվ 11 A-dur սոնատի
2) թիվ 41 C-dur սիմֆոնիայի
3) թիվ 15 F-dur սոնատի
4) թիվ 40 g-moll սիմֆոնիայի

25 Երգեհոնը

1) ստեղնաշարային գործիք է
2) ստեղնաշարային-փողային գործիք է
3) ստեղնաշարային-կսմիթային գործիք է
4) ստեղնաշարային լարային գործիք է

26 Նշված կոմպոզիտորներից ո՞վ չի գրել «Պրելյուդներ և ֆուգաներ» դաշնամուրային ցիկլ.

1) Ռոդիոն Շչեդրին
2) Դմիտրի Շոստակովիչ
3) Ալֆրեդ Շնիտկե
4) Յոհան Սեբաստիան Բախ

27 Ո՞վ չի հանդիսանում Մոսկովյան դաշնամուրային կատարողական դպրոցի ներկայացուցիչ

1) Եկատերինա (Կետտի) Մալխասյան
2) Յուրի Հայրապետյան
3) Աննա Ամբակումյան
4) Ռոբերտ Անդրիասյան

28 Ո՞ր ստեղծագործությունը չի պատկանում Ռոբերտ Շումանի գրչին.

1) Պատանեկան ալբոմ, op. 68
2) Նովելետներ, op. 21
3) Մանկական ալբոմ, op. 39
4) Մանկական տեսարաններ, op. 15

29 Ո՞ր հայ կոմպոզիտորի պոլիֆոնիկ ստեղծագործությունն է ներառված երաժշտական դպրոցների 1-ին դասարանի ծրագրում.

1) Սերգեյ Բալասանյան
2) Վաչե Ումր-Շատ
3) Գեորգի Սարաջյան
4) Գայանե Չեբոտարյան

30 Ո՞ր ստեղծագործությունն է պատկանում Ֆրանց Շուբերտին

1) Բալլադներ
2) Կրեյսլերիանա
3) Երաժշտական ակնթարթներ
4) Սիմֆոնիկ էտյուդներ

31 Սերգեյ Պրոկոֆևի ո՞ր կոնցերտն է գրված ձախ ձեռքի համար.

1) N4, op. 53
2) N5, op. 55
3) N1, op. 10
4) N2, op.16

32 Նշեք կոմպոզիտորին, ով հեղինակել է «Փերիների պարը» երկու դաշնամուրի համար

1) Գաբրիել Ֆորե
2) Արամ Խաչատրյան
3) Ալեքսանդր Հարությունյան
4) Ժորժ Բիզե

33 Ո՞ւմ գրչին է պատկանում «Ակնթարթային տեսիլք» դաշնամուրային պիեսը



1) Ալեքսանդր Գեդիկե
2) Դմիտրի Կաբալևսկի
3) Անդրեյ Էշպայ
4) Սամուիլ Մայկապար

34 Ո՞ր կոմպոզիտորին են պատկանում «բալլադ» ժանրի դաշնամուրային առաջին նմուշները.

1) Ռոբերտ Շուման
2) Ֆրեդերիկ Շոպեն
3) Ֆերենց Լիստ
4) Ֆրանց Շուբերտ

35 Ինչպե՞ս է կոչվում Սերգեյ Ռախմանինովի ստեղծագործությունը.

1) «Ռապսոդիա Պագանինիի թեմայով»
2) «Ռապսոդիա Հենդելի թեմայով»
3) «Ռապսոդիա Շումանի թեմայով»
4) «Ռապսոդիա Կորելլիի թեմայով»

36 Ո՞վ է հեղինակել «Միկրոկոսմոս» դաշնամուրային ցիկլը.

1) Բելա Բարտոկ
2) Զոլտան Կոդայ
3) Պաուլ Հինդեմիթ
4) Իգոր Ստրավինսկի

37 Ինչպե՞ս էին անվանում Յոհաննես Բրամսի դաշնամուրային կոնցերտները.

1) Կոնցերտներ՝ գրված հին ոճով
2) Սիմֆոնիա-կոնցերտ դաշնամուրի և նվագախմբի համար
3) Դաշնամուրային կոնցերտ
4) Սոնատ-սիմֆոնիաներ

38 Ո՞վ է «Դիաբելլիի վալսի թեմայով 33 վարիացիաների» հեղինակը.

1) Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտ
2) Յոզեֆ Հայդն
3) Գեորգ Ֆրիդրիխ Հենդել
4) Լյուդվիգ վան Բեթհովեն

39 Ո՞ր երկրին է նվիրված Ֆերենց Լիստի «Ճամփորդության տարիները» դաշնամուրային ալբոմի 1-ին տետրը.

1) Իսպանիա
2) Շվեյցարիա
3) Ավստրիա
4) Իտալիա

40 Էդուարդ Աբրահամյանի ո՞ր պրելյուդից է հատվածը.



1) թիվ 20
2) թիվ 13
3) թիվ 5
4) թիվ 24

41 Նշեք պիեսը, որը Էդվարդ Միրզոյանի «Ալբոմ թոռնիկիս» ցիկլից է.

1) «Մարիամ»
2) «Աշուն»
3) «Տիկնիկների պարը»
4) «Շուշանիկ»

42 Ո՞ւմ գրչին է պատկանում դաշնամուրային պարերի հատվածը.



1) Կոմիտաս
2) Քրիստափոր Կարա-Մուրզա
3) Ռոբերտ Անդրիասյան
4) Նիկողայոս Տիգրանյան

43 Ո՞վ է «Դաշնամուրային արվեստի մասին. Ուսուցչի գրառումներ» գրքի հեղինակը.
(Об искусстве фортепианной игры. Записки педагога)

1) Հենրիխ Նեյգաուզ
2) Կոնստանտին Իգումնով
3) Յակով Զարգարյան
4) Յակով Ֆլիեր

44 Ո՞ր կոմպոզիտորն է առաջին անգամ դաշնամուրային կոնցերտի ժանրում կիրառել կրկնակի էքսպոզիցիա.

1) Լյուդվիգ վան Բեթհովեն
2) Յոզեֆ Հայդն
3) Դոմենիկո Սկարլատի
4) Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտ

45 Քանի՞ տետրից է բաղկացած Ֆելիքս Մենդելսոնի «Երգեր առանց խոսքի» շարքը.

1) 10
2) 8
3) 5
4) 2

46 Նշեք. ո՞վ դաշնակահար չէ

1) Էմիլ Գիլելս
2) Արթուր Ռուբինշտեյն
3) Անտոն Գակկել
4) Մարգարետ Լոնգ

47 Նշեք ցիկլը, որը չի պատկանում Սերգեյ Պրոկոֆևին.

1) «Վաղանցիկություններ»
2) «Աֆորիզմներ»
3) «Ծեր տատիկի հեքիաթներ»
4) «Սարկազմներ»

48 Ո՞ւմ գրչին է պատկանում դաշնամուրային վարիացիաների հատվածը.



1) Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտ
2) Յոզեֆ Հայդն
3) Յոհան Սեբաստիան Բախ
4) Լյուդվիգ վան Բեթհովեն

49 Ո՞մ գրչին է պատկանում «12 մանկական պիես ժողովրդական թեմաներով» դաշնամուրային ժողովածուն

1) Ստեֆան Էլմաս
2) Գենարի Կորգանով
3) Տիգրան Չուխաջյան
4) Կոմիտաս

50 Քանի՞ տետրից է բաղկացած Արամ Խաչատրյանի «Մանկական ալբոմ» պիեսների ժողովածուն

1) 2
2) 4
3) 1
4) 3

51 Դաշնամուրային քանի՞ սոնատի հեղինակ է Լյուդվիգ վան Բեթհովենը.

1) 29
2) 19
3) 32
4) 30

52 Դաշնամուրի և նվագախմբի համար գրված քանի՞ կոնցերտ ունի Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտը.

1) 27
2) 28
3) 29
4) 25

53 Թվարկված կոմպոզիտորներից ո՞վ է պատկանում անգլիական վըրջինալիստներին.

1) Ուիլյամ Բըրդ
2) Դոմենիկո Սկարլատի
3) Լուի Կլոդ Դակեն
4) Ֆրանսուա Կուպերեն

54 Թվարկված կոմպոզիտորներից ո՞վ է 555 կլավիրային սոնատների հեղինակը.

1) Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտ
2) Դոմենիկո Սկարլատի
3) Ֆրանսուա Կուպերեն
4) Յոզեֆ Հայդն

55 Ո՞ր ստեղծագործությունը չի պատկանում Կամիլ Սեն-Սանսի գրչին.

1) «Արաբական կապրիս»
2) «Կենդանիների կառնավալ»
3) «Վիեննական կառնավալ»
4) Ֆանտազիա «Աֆրիկա»

56 Ո՞ր ժանրում է գրված Ֆերենց Լիստի «Ընթերցելով Դանթեին» ստեղծագործությունը.

1) բալլադ
2) ռապսոդիա
3) սոնատ
4) ֆանտազիա-սոնատ

57 Թվարկված կոմպոզիտորներից ո՞վ է հեղինակել «Իսլամեյ» դաշնամուրային ֆանտազիան.

1) Մորիս Ռավել
2) Միլիյ Բալակիրև
3) Կամիլ Սեն-Սանս
4) Սեզար Կյուի

58 Ռոմանտիզմի ներկայացուցիչ ո՞ր կոմպոզիտորն է ստեղծել մեծ թվով տրանսկրիպցիաներ դաշնամուրի համար.

1) Ֆերենց Լիստ
2) Ռոբերտ Շուման
3) Ֆրանց Շուբերտ
4) Յոհաննես Բրամս

59 Ռուս ո՞ր կոմպոզիտորի դաշնամուրային ցիկլից է «Չծնված ճուտիկների բալետը».

1) Միլիյ Բալակիրև
2) Մոդեստ Մուսորգսկի
3) Սերգեյ Լյապունով
4) Սեզար Կյուի

60 Ո՞ր բալետում է Էդգար Հովհաննիսյանը օգտագործել ժողովրդական մեղեդիներ.

1) Անտունի
2) Հավերժական կուռք
3) Երկնագույն նոկտյուռն
4) Ժաննա դ՛Արկ